ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ԽԱԹԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Այսօրվա քաղաքական իրամայականների թելադրանքով, հարավային կովկասի տարածաշրջանային զարգացումներն ու գործընթացները նորանոր անակնկալներ են մատուցում դիտորդներին, նախ իրենց սրընթացությամբ ու առաջացման շարժառիթներով եւ հետո վերջնական արդյունքներով: Շատ դեպքերում նույնիսկ անհնար է լինում հետեւել դրանց տրամաբանական ընթացքին եւ մեկնաբանել պատճառային փոխկապակցվածությունը: Տպավորությունն այնպիսին է ասես տարածաշրջանում ամեն օր սպասվում են կտրուկ շրջադարձեր, ինչպես արտաքին կողմնորոշումների, այնպես էլ ներքաղաքական իրավիճակների:

Ուստի եւ Հայաստանում, եւ Վրաստանում ու Ադրբեջանում այսօր ամենայն ուշադրությամբ հետեւում են տարածաշրջանային տեղաշարժերին, խոշոր տերությունների յուրաքանչյուր քայլերին, միջազգային ասպարեզի շրջադարձերին, համաշխարհային ինթեգրացիոն գործընթացներին, իսկ այդ երկրների քաղաքական այրերը միջազգային ֆորումներին ու գագաթաժողովներին առիթը բաց չեն թողնում հավաստիացնելու իրենց նվիրվածությունը հակահաբեկչական արդի դաշինքին ու եւրոպական ընդունված արժեքներին:

Եռյակի «Աղեղը»

Հայաստանի Հանրապետությանը սահմանակից չորս պետությունները իրենց նկարագրով, ներքին ու արտաքին քաղաքական վարքով, անգամ նաեւ բարքերով խորապես տարաբնույթ են: Տարբեր է եւ նրանց վերաբերմունքը, մոտեցումներն ու ամենակարեւորը քաղաքական, ռազմավարական եւ տնտեսական հեռանկարներն ու մտադրությունները Հայաստանի նկատմամբ: Տարածաշրջանում այսօր չկան անգամ երկու պետություններ, որոնք գտնվեն մեկ ռազմաքաղաքական դաշինքի մեջ: Այսպես, Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է ավելի քան 50 տարի, Վրաստանն ու Ադրբեջանը ԱՊՀ շրջանակներում

դեռևս ժամանակին կտրականապես հրաժարվեցին ռազմական հետագա համագործակցությունից, Հայաստանը ԱՊՀ հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ է, իսկ Իրանը ընդհանրապես չի մասնակցում նման կառույցներում:

Այս հանգամանքը բնավ չխոչընդոտեց տարածաշրջանային երկկողմ եւ անգամ եռակողմ սերտ համագործակցությանը, ինչպես առեւտրի ու տնտեսության, այնպես էլ ռազմական բնագավառում: Ավելին, այսօր տարածաշրջանի երեք պետություններ՝ Թուրքիան, Վրաստանն ու Ադրբեջանը միմյանց հայտարարել են ստրատեգիական պարտնյորներ, ինչը հիմնականում վերջին երկուսին լայն հնարավորություններ է ընձեռում ավելի մոտիկից շնչելու Հյուսիսատլանտյան դաշինքի ռազմական օդը: 2002-ի Պրագայի Եւրատլանտյան գագաթաժողովից այլեւս պարզ դարձավ, որ ՆԱՏՕ-ին անդամակցության հարցը ե՛ւ Վրաստանում, ե՛ւ Ադրբեջանում գերխնդիրներ են ու նախադեպը ետխորհրդային տարածքում կարծես արդեն կա՝ Մեբձբալթյան պետություններ են, որոնց այդ առումով Վրաստանն ու Ադրբեջանը փորձում են մասամբ նմանակել:

Վերջապես այն ինչ ցուցադրեց Պրագայի գագաթաժողովը փայլուն արտացոլումն էր աշխարհում տիրող արդի խուճապային իրավիճակի: Ոմանք խնդրում ու հավատարմության խոստումներ էին տալիս բլոկի ղեկավարությանը, իսկ ոմանք էլ անաղմուկ եւ առանց ունայնության ասես, հաշտվել են իրենց ճակատագրի հետ, անցան որպես լիիրավ անդամներ: Ինչեւէ, հյուսիսատլանտյան օղակը, որը կամաց-կամաց նեղանում է եւ համարյա արդեն Մոսկվայի մատույցներում է, հնարավոր է որ մի օր էլ իր վերջնական նպատակին հասնի՝ Ռուսաստանի Դաշնությունը ինքը ծեծի ՆԱՏՕ-ի դարպասը ու խնդրի որպես շարքային անդամ ներս մտնելու:

Թուրքիա, Վրաստան եւ Ադրբեջան քաղաքական ու արդեն դաշնային այս »աղեղը« ունի նաեւ իր ֆինանսա-տնտեսական երկարաժամկետ հեռանկարները: Եւ հենց այս կոչերով էլ նրանք հանդես եկան 90-ականների առաջին կեսին, երբ ուրվագծվում էր ուժերի դասավորությունը մեր տարածաշրջանում: Այդ տարիներին, սակայն բացի առեւտրային պարզ հարբերություններից եւ մասամբ էլ միջպետական տնտեսա-

կան պայմանագրերից ու պաշտոնական այցելություններից իրենց սեփական նախաձեռնությամբ՝ այսինքն զուտ այս երեքի կողմից խոշորածավալ ծրագրեր չհայտարարվեցին: Թուրքիան, որն այդ ճեյակում իրեն վերապահել է լիդերի դերը, փորձում էր եւ շարունակում է՝ ամերիկյան ստվերի ներքո, առաջատարի իրավունքով «պաշտոնավարել», քանզի մեծ ախորժակներ ունի տարածաշրջանում ինչպես ռազմական ներկայության, այնպես էլ էներգակիրների շահագործման ու փոխադրման հարցերում: Այնուհանդերձ 1994-ի սեպտեմբերին Բաքվում կնքված հայտնի «Դարի պայմանագրում», որը BP-Amoco տրանսազգային նավթային ընկերությունների ղեկավարությամբ պիտի շահագործի կասպիան երեք խոշոր նավթահանքերը, Թուրքիայի պետական նավթային ընկերությանը այդ շրջանում հասավ ընդամենը 1.7 տոկոսի շահաբաժին եւ միայն հետագայում այն ավելացավ այլ ընկերությունների մասնակցության հրաժարականներից: Սա Թուրքիայի ամենախոշոր ու հեռանկարային տնտեսական ակնկալիքն էր Ադրբեջանից, քանի դեռ հիարկե վերջնական չէր նախագծված Բաքու-Ջեյհան նավթատարի ուղին: Անշուշտ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան արդի երթուղին, որը մշակվեց ու հրամցվեց այլոց կողմից իր ռազմավարական նշանակությամբ հեռանում է այս կոնտեքստից, սակայ դրա մասին քիչ ավելի ուշ:

Այսպիսով 90-ականների կեսերին կազմավորված Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան «աղեղը» աստիճանաբար փորձեց այլ որակ եւ ուղղվածություն ստանալ, քանզի դրան նպաստեցին բազմաթիվ հանգամանքներ: Նախ աբխազական եւ դարաբաղյան պատերազմներից հետո տարածաշրջանում ստեղծված իրավիճակը, որտեղ գերիշխում էր ինչպես ետպատերազմյան շոկային, այնպես էլ վակուումային մթնոլորտը: Սեփական անհաջողությունները հմտորեն բարդելով ռուսների վրա, ինչպես վրացիները, այնպես էլ ազերիները իրենց դարպասները ամուր փակեցին նրանց առջեւ: Իսկ վակուումը երկար չէր կարող մնալ՝ այն պիտի լրացվեր եւ այդպես էլ եղավ: Մանավանդ կար հավակնորդ եւ այն էլ Վաշինգտոնի կողմից հովանավորվող ու աջակցվող:

Հարկ է նշել նաեւ, որ առեւտրա-տնտեսական փոխհարաբերությունները Թուրքիայի, Վրաստանի ու Ադրբեջանի միջեւ

շոշափելի նվաճումներ ու լուրջ արդյունքներ այդ շրջանում չգրանցեցին, թերեւս այդ երեքի «քաշային» կատեգորիաները չէին համապատասխանում: Շահում էր եւ շարունակում է հիմնականում շահել միայն Թուրքիան, քանզի այն երկուսը հանդես են գալիս ընդամենը որպես իրացման շուկաներ:

Վերջապես անցել է համարյա 10 տարի եւ միայն էներգակիրների /նավթի ու գազի/ երթուղիներից, որոնք նախագծվեցին ու պարտադրվեցին համաշխարհային նավթային հսկաների եւ դրանց հովանավոր հայտնի պետությունների կողմից, ուրիշ ոչ մի էական, ընդ որում զուտ երեքի միջեւ նախաձեռնություն առաջ չի քաշվել, բացի ռազմական համագործակցությունից, որը թերեւս դարձավ վերջին շրջանի գերակայող նպատակը: Ուստի ստեղծված այս «աղեղը» իր արդյունքում՝ 21-րդ դաբասկզբին ընդունեց մեկ ուղղվածություն, այն է ռազմա-ստրատեգիական հեռանկարային փոխօգնություն տարածաշրջանում՝ սեփական անվտանգության ապահովման ակնկալիքով:

Եթե ամերիկացիներն այսօր փորձում են ցույց տալ, որ անուշադիր են այս եռյակի ռազմական ու ռազմատեխնիկական բնագավառի ակտիվ փոխներթափանցումներին, ապա Բաքու-Վրաստան-Ջեյհան նավթատարի, կամ ինչպես ընդունված է ասել «երկաթե խողովակաշարի» իրականացման գործում պաշտոնական «կնքահոր» դեր են կատարում: Դեռեւս 2002 թ. սեպտեմբերին Բաքվի Մենգեչալ տերմինալում նավթատարի բացման հանդիսավոր արարողությանը ԱՄՆ էներգետիկայի քարտուղար Սպենսեր Աբրահամը ընթերցեց նախագահ Բուշի ողջույնի խոսքը, որտեղ ասվում էր. «Մենք միշտ եղել ենք տարածաշրջանային բոլոր պետությունների դաշնակիցը եւ այդպիսին կմնանք», իսկ վերջում խորը գոհունակությամբ շեշտվում էր երկու ամերիկյան նավթային այն ընկերությունների անունները, որոնք իրենց փայաբաժիններով մասնակցում են ծրագրին: Նախագահներ Ալիեւը, Շեւարդնաձեն եւ Ահմեդ Մեզերը լուռ երախտագիտությամբ ընդունեցին թիւ 1 գերտերության առաջնորդի ջերմ ուղերձը, որտեղ զգացվում էր Բուշ կրտսերին բնորոշ քաղաքական հայտարարությունների համարձակ ու անկաշկանդ ոգին: Ինչեւէ, Միացյալ Նահանգների տարածաշրջանային մեկ այլ դաշնակցի Հայաստանի իսպառ բացակայության փաստը այդ խոշորածավալ ու բազ-

մամիլիարդ նախագծում /եւ ոչ միայն այդտեղ, նաեւ Քաքու-Էրզրում գազամուղին, Ինոգեյթ եւ այլն/, բնավ որեւէ դրական լիցք ու երանգ չէր հաղորդում տարածաշրջանային ինթեգրացիոն գործընթացին ու փխրուն կայունությանը:

Իհարկե ժամանակին խոսվեց ու քննարկվեց նավթամուղի հատվածներից մեկի Հայաստանով անցկացնելու վարկածը, /հիմնականում ամերիկյան կոնգրեսմեններ Քրոուլին, Փալոնը, Շիֆը եւ այլն/ սակայն ապարդյուն, դիմադրությունը չափազանց ուժեղ էր: Անգամ պարզ հաշվարկը, որը ցույց տվեց ավելի քան 500 միլիոն դոլարի խնայողություն ծրագրի սկզբնական 2.9 միլիարդ նախատեսված ընդհանուր հաշվարկից, բոլորովին չգրավեց աշխարհի ուժեղների ուշադրությունը: Անհավանական է, սակայն փաստ, որ հենց այս նախագծի եւ տարածաշրջանում նրա իրականացման բանակցային եւ փուլային պլանավորման գործընթացում, որն ի դեպ տեւեց բավական երկար, բացեիբաց անտեսվեց բիզնես գործարքների ամենատարրական ու հայտնի օրենքը «առավել շահույթ գործարքից»: Լռում են նույնիսկ այնպիսի կարեւոր հանգամանքի մասին, ինչպիսին է կասպիան նավթահումքի մեկ տոննայի շահագործման ու արտահանման դիմաց պահանջվող 6-ից 7 անգամ ավել գումարը: Ուստի, եթե մաքուր շահույթ չէր այս բազմամիլիարդ գործարքի գերխնդիրը, ապա ի՞նչն էր:

Հար եւ նման տեւական գործընթացները վերջին տարիներին մեծապես խորացրին մեր ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական մեկուսացման վտանգավոր երեւույթը այս տարածաշրջանում, որն անդառնալի հետեւանքներ կարող է ունենալ տեսանելի ապագայում:

«Երկաթե» հաշվարկ

Այսպես, գաղտնիք չէ, որ 2001-ի սեպտեմբերյան ահաբեկչական դեպքերից հետո ամերիկյան դիքորոշումներն ու առավելապես ռեգիոնալ մոտեցումները ավելի հստակեցվեցին: Հայաստանում դա անմիջապես արձագանքվեց, երբ հայտնի դարձավ, որ Ազատության Աջակցության ակտի /FSA/ շրջանակներում 1992-ին ընդունված թիւ 907 սենկցիան, որն արգելում էր ամերիկյան կառավարության ֆինանսական օգնությունը Ադրբեջանին ՀՀ ու ԼՂ շրջափակման համար, Սպիտակ

տան պահանջով, Մենատի կողմից վերանայվեց ու չեղյալ հայտարարվեց: Հայաստանը իհարկե դեռևս շրջափակման մեջ է եւ ոչ միայն Ադրբեջանի, այլ նաեւ Թուրքիայի կողմից, թեւ դա ինչ զարհուրելի վնասներ է հասցնում տնտեսությանն ու զարգացման մեր գործընթացներին քննարկման այլ թեմա է: Ամերիկյան ստրատեգները գտնում էին, որ Ապշերոնյան թերակղզին հարմար պլացդարմ է Աֆղանստանին հարվածներ հասցնելու, սակայն իրականում այդպես չեղավ: Ապշերոնն ու Բաքուն ընդհանրապես անտեսվեցին այդ պատերազմում, չնայած պաշտոնական Բաքուն սեփական հողի վրա ամերիկյան ռմբակոծիչներ տեսնելու աննկարագրելի ձգտում էր ցուցաբերում: Այնուամենայնիվ այդ բացը լրացնելու առիթ առաջացավ եւ ադրբեջանական զինծառայողների մի խումբ նախ մեկնեց Աֆղանստան պատերազմելու Թալիբների մնացորդների եւ Ալ-Կաիդայի ահաբեկիչների դեմ, իսկ հետագայում նաեւ Իրաք:

Ինչեւէ, դառնանք Բաքու-Ջեյհան նավթամուղին, նրա հանդիսավոր բացմանը՝ երբ նախագահների մասնակցությամբ եւ աշխարհի այլ լիդերների ողջույնի ուղերձներով Թվում էր, թեւ այդպես էլ պետք է լիներ երկար մտածելուց ու մանրամասն քննարկելուց հետո որոշեցին ու հանգեցին վերջնական եզրակացության՝ սկսել նավթամուղի շինարարությունը: Սակայն ողջ այդ գործընթացի ժամկետները, որոնք մեր կարծիքով այնքան էլ պատահական չեն, մտածելու առիթ են տալիս: Նախ նավթամուղի իրականացման մասին /որն ի դեպ տարեկան պետք է տեղափոխի ավելի քան 400 միլիոն բարել՝ նավթահումք/ սկսեցին խոսել համարյա անմիջապես Ծոցի պատերազմից հետո, իսկ արդեն ռեալ շինարարության հիմնարկեքի մասին հայտարարեցին Իրաքի դեմ հնարավոր մեկ այլ պատերազմի շեմին: Տպավորությունը այնպիսին էր, ասես այդ ծրագրից համաշխարհային նավթային հսկաները գերշահույթներ այնքան էլ չեն ակնկալում, քանզի հենց սկզբից բացահայտորեն երեւաց դրա չափազանց բաղաքականացված երանգն ու նպատակայնությունը:

Այսպես, նախագծի իրականացման ընթացքի երկարատեւ դիտարկումները մեզ թույլ են տալիս կարծելու արդեն, որ դա մի հիանալի գեոստրատեգիական հաշվարկ է, որն աշխատե-

լու է Մերձավոր Արևելքում հնարավոր պատերազմների և հաղթանակների, և անգամ պարտության դեպքում, ինչու չէ նաև քաղաքական կտրուկ շրջադարձերի ու հեղափոխությունների ուղղորդման անփոխարինելի լծակ: Այսինքն գոյություն ունեն ավելի խոշոր ու թերևս ավելի ռեալ ակնկալիքներ տարածաշրջանից քան Բաքու-Ջեյհանն է, որը կատարում է ընդամենը պահեստային տարբերակի, կամ այլընտրանքի դեր: Եթե կա լուրջ վարկած, որ Կասպիան շելֆի ածխաջրածնային պաշարները պարզապես պատրանք են, ապա ինչու չի կարող պատրանքի տեղափոխման նախագիծը նույնպես պատրանք լինի: Չնայած այսօր այն կառուցման իր ակտիվ ընթացքի մեջ է և շահագրգիռ կողմերը հայտարարել են, թե գործարկվելու է 2005 թվականին, այնուհանդերձ Բաքու-Ջեյհանը սովորական "H3" է՝ անձեռնմխելի պահեստային մի տարբերակ և անակնկալ իրավիճակների գործնական խաղաքարտ, որը կփորձեն իրականացնել ծայրահեղ պայմանների դեպքում: Չեմ կարծում, որ ողջույնի ուղերձներ հղած եվրոպական լիդերները չէին գիտակցում, որ նավթամուղը երբեք շահագործման չի հանձնվի 2005-ին և նրա 1750 կմ ճանապարհի մոտ երկու երրորդը անցնում է Վրաստանի ու Թուրքիայի համարյա անհսկելի տարածքներով:

Բնականաբար այս ֆոնի վրա կանխավ հրատապ է դառնում խիստ կարևոր մի խնդիր, որը կապված է նավթամուղի անվտանգության հետ, այսինքն շահագործման ընթացքում նրա պաշտպանության հետ: Մինչ վերջերս այդ հարցը ընդհանրապես խուսափում էր մեկնաբանել Դեվիթ Վուդվարդը, որը համարվում է «Բրիթիշ Պետրոլիում»-ի կողմից նախագծի իրականացման պատասխանատու Ադրբեջանում: Նրան կարելի է հասկանալ, Վուդվարդը ընդամենը խոշոր նավթային ընկերության ներկայացուցիչ է, սակայն հարցը փորձում էին շրջանցել նաև ԱՄՆ ու Մեծ Բրիտանիայի քաղաքական շատ գործիչներ ու ղեկավարներ: Երբեմն դրա մասին խոսում էին ամերիկյան որոշ կոնգրեսմեններ ու հազվագյուտ զինվորականներ: Առավել քան հասկանալի է, որ նավթամուղի ողջ երկայնքով նրա անվտանգության ապահովման խնդիրը ստանձնելու է Միացյալ Նահանգները, օգտագործելով միգուցե ՆԱՏՕ դաշնային համագործակցության ողջ սպեկտրը: Այ-

սինքն նաեւ այն հեռանկարային ծրագրերը, որոնք վերաբերում են դաշինքի ոչ անդամ պետություններին: Դա լիովին համապատասխանում է եւ Վրաստանի, եւ Ադրբեջանի ստրատեգիական պլաններին, որտեղ հիանալի գիտակցում են, որ «երկաթե խողովակաշարի» շինարարության հետ իրականություն է դառնում նաեւ նրանց ամենաբաղձալի երազանքը: Վերջապես անհնար դարձավ այլեւս լռելը եւ այդ առումով միանշանակ հայտարարությամբ հանդես եկավ Եւրոպայում ԱՄՆ զորախմբի գլխավոր հրամանատարի տեղակալ գեներալ Չարլզ Ուալդը, որը «American Defense News» հանդեսին տված իր հարցազրույցին նշեց, թե կառուցվող նավթամուղի ողջ երկայնքի անվտանգության ապահովման խնդիրը մեծապես համապատասխանում է ԱՄՆ շահերին տարածաշրջանում եւ դա կիրականացվի ՆԱՏՕ-ի առաքելությամբ:

Ուստի ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ի ներթափանցմանը Հարավային Կովկաս, ապա այն տակավին սկսել է փուլ առ փուլ իրականացվել: Վերջին տարիների Վրաստանի ու Ադրբեջանի քաղաքական ղեկավարության, ի դեմս հայր Ալիեւի ու Շեւարդնաձեի անզիջում մրցակցությանը սիրաշահելու ՆԱՏՕ-ի ղեկավարությանը ու մասնավորապես ամերիկյան պրեզիդենտներին՝ համոզելու նրանց ամենակարճ ու անհավանական ժամկետներին անդամակցելու այդ դաշինքին, գավեշտալիորեն հիշեցնում էր նրանց նույն մրցակցությունը սովետական ռեժիմի օրոք Լեոնիդ Բրեժնեւին շողոքորթելու մեջ: Շատերն են հիշում, որ լեգենդ էր դարձել այն երեւույթը, թե նրանցից ով ավելի հաճախ կնշի գլխավոր քարտուղարի անունը իրենց ելույթներում ու կուսակցական համագումարներում: ՆԱՏՕ-ին անդամակցելու իրենց բուռն ցանկությունների մասին տեղին ու անտեղին հայտարարություններով, այսօր էլ այդ երկրների ղեկավարները բավականին անզուսպ են: Ի դեպ այդ անզիջում մրցակցությունը դուր էր գալիս սովետական լիդերին եւ սա էլ առատաձեռնորեն շքանշաններ, պաշտոններ ու ֆոնդեր էր նվիրաբերում, առավելությունը տալով մեկ Շեւարդնաձեին, մեկ Ալիեւին: Եւ տպավորությունն այնպիսին է ասես վերջին տասնամյակների պատմությունը կրկնվում է, սակայն չնչին փոփոխություններով ու թերեւս արդի մրցապայքարում Վրաստանը որոշակի առավելություններ է արձանագրում:

Վաշինգտոնը հիանալի օգտագործեց Պանկիսի կիրճում վրացական բանակի «անհաջող» ու երկարատեւ փորձերը պայքարելու չեչեն ահաբեկիչների ու գրոհայիններ դեմ, որոնք սպառնում էին Ռուսաստանի անվտանգությանը եւ արագ ձեռնամուխ եղավ ապահովելու այդ «անվտանգությունը» սեփական միջոցներով՝ Վրաստան մտցնելով բավականին սահմանափակ զորախումբ: Վրաստանում մեծ խանդավառությամբ ընդունեցին այդ լուրը, թե այսուհետ հակահաբեկչական գործողություններ իրականացնելու նպատակով, նրանց ռազմուժին մարզելու են ամերիկացի փորձված հրահանգիչները: Զորախումբը իսկապես մեծ չէ քանակով, սակայն հեռանկարային իր նշանակությամբ չափազանց կարեւոր ու խոշոր:

Այլ է Ադրբեջանին հատկացված դերը: Այստեղ մի քիչ անզգույշ վարվեցին, կապված վերջին տարիներին Բաքվից հնչող ռազմատենչ հայտարարությունների հետ, ընդ որում ե՛ւ ընդդիմադիր, ե՛ւ իշխանական մակարդակներից: Վերջինս բավականին լրջորեն անհանգստացրեց ՆԱՏՕ-ի ստրատեգներին եւ ամերիկյան բարձրաստիճան զինվորականներին, որոնք անթաքույց չեն ցանկանում մասնակցություն ցուցաբերել ազերա-ղարաբաղյան հակամարտության որեւէ զինված բախման, առավել եւս պատերազմի վերսկսման քարոզարշավին: Ուստի Ադրբեջանին թույլ տրվեց ՆԱՏՕ-ի հետ շփվելու իր ցանկությունները մասնակիորեն «բավարարել» Թուրքիայի ակտիվ միջնորդությամբ, սակայն որոշ սահմանափակումներով՝ թելադրված ՆԱՏՕ-ին Թուրքիայի անդամությամբ:

Այնուհանդերձ ՆԱՏՕ-ին համառորեն անդամակցել ձգտող երկրներին պարբերա- բար ցույց են տալիս իրենց հատկացված տեղն ու դերը: Դաշինքի նախկին գլխավոր քարտուղար Լորդ Ռոբերտսոնը առիթը բաց չէր թողնում կրկնելու, որ դեռ մտադիր չեն իրենց շարքերն ընդունելու Հարավային Կովկասի պետություններից ոչ մեկին, հասկացնել տալով, որ որոշումներն ընդունվում են ոչ թե ըստ «ներկայացվող հայտերի», այլ բոլորովին ուրիշ մոտեցումների, ժամկետների ու ստրատեգիական պլանների հիման վրա:

Ռեւանշ եւ մեկուսացման վտանգ

Ինչեւէ, այլեւս անվիճելի է, որ թե՛ Վրաստանի, թե՛ Ադրբեջանի արդի քաղաքական ղեկավարության գերխնդիրն է՝ *ռեւանշը* տարածաշրջանում: Վտանգավոր այս երեւույթը, որը թե՛ տարածաշրջանում, թե՛ միջազգային ասպարեզում առաջին հերթին ամենաանպաստ հետեւանքներով է անդրադառնում նախ Հայաստանի վրա եւ պարբերաբար էլ բորբոքվում է Թուրքիայի կողմից, օրեցօր ահագնացող սպառնալիք է ողջ տարածաշրջանում՝ Դամոկլյան սրի պես ճոճվող: Ոչ Վրաստանում, եւ ոչ էլ Ադրբեջանում քաղաքական ուժերը չեն կարողանում իրար ներել համապատասխանաբար Աբխազիայի ու Լեռնային Ղարաբաղի կորուստների համար: Իշխանության եւ քաղաքական բոլոր տեսակի ուժերի փոխադարձ մեղադրանքների հիմնական դրդապատճառը պատերազմը տանուլ տալն է: Ադրբեջանում մինչ այսօր խիստ ռեժիմի բանտերում «պատերազմի մեղքերի համար» իրենց պատիժներն են կրում նախկին նախարարներ, զինվորականներ, դավաճան համարվող թալիշների լիդերը եւ էլի շատ ուրիշներ: Հասարակության մեջ կան շերտեր, որոնք Ղարաբաղի հիմնախնդրի լուծումը տեսնում են միմիայն պատերազմի վերսկսման գաղափարի մեջ: Իրավիճակն ավելի են գրգռում պետության ղեկավարները, մանավանդ զինվորական վերնախավը: Վերջապես դա անխափան գործող մի արգումենտ ու պատրվակ է, որը հմտորեն շեղում է հասարակության հիմնական ուշադրությունը Բաքվի արդի իշխանությունների աննախադեպ կոռումպացվածությունից:

Ընտրությունների «անցկացման» մեթոդներն ու քաղաքական հնարքներն այդ հարեւան երկրում /եւ ոչ միայն այնտեղ/ ոչ մի լավ բան չեն խոստանում: Ադրբեջանում բոլոր քաղաքական ուժերը տենդագին սպասում էին 2003-ի աշնան նախագահական ընտրություններին: Այնտեղ իշխանության համար պայքարն իրոք ավելի անողոք ու անզիջում է եղել եւ դեռ իր շարունակությունն է ունենալու: Չէ՞որ Բաքվի «կերամանը» իր ծավալներով անհամեմատ ավելի խոշոր է քան Հայաստանում ու Վրաստանում միասին վերցրած ու նախ եւ առաջ միլիարդավոր դոլարների ներդրումներով: Միայն վերջին տարիներին կազմավորված 20-ից ավելի նավթագազային կոնսոր-

ցիումների մաքուր բոնուսային մասը /խրախուսական եւ նախավանսային գումարները պետական եկամտին/ կազմել են մոտ մեկ ու կես միլիարդից ավելի, որոնք համարյա առանց արգելքների հոսել են Ալիեւի կլանի անդամների գրպանները: Բացի դրանից, գաղտնիք չէ, որ առաջիկա տասնամյակներին այդ ծրագրերից ակնկալվում են հարյուր-միլիոնավոր դոլարների նոր գերշահույթներ: Հիրավի պարզ ու հասկանալի է դառնում թե որքան մեծ է քաղաքական այլ հարթակներին կանգնած մյուս «գիշատիչների» ազերական անհաշտ ընդդիմության ծարավը, որոնք այսօր մեկուսացված են այդ «կերամանից»: Դրան ավելացրած ռեւանշի հասնելու ձգտումների պրոպագանդան համարյա պետական մակարդակի հասցված, որը կարող է պայքարի եւ իշխանություն գավթելու կարգախոս դառնա:

Ուստի, որքան մեծ է սակը /stake/, այնքան համառ է պայքարը եւ նույնքան էլ առատ արյունահեղությունը: Իրոք պատկերն առավել անմխիթար է դառնում, երբ տարածաշրջանում սկիզբ առած հեղափոխությունների շղթայական արձագանքը սկսի գործել: Այս ֆոնի վրա, Բաքվում, /ինչպես նաեւ Երեւանում/ ներքաղաքական իրավիճակի կտրուկ խախտումների, կամ լարվածության աստիճանի ավելացման հետ մեծանում է առաջին հերթին Լեռնային Ղարաբաղին եւ հետո Հայաստանին սպառնացող անմիջական վտանգները: Իսկ ազերական երկպառակությունները եւ ներքաղաքական անակնկալ- ները, այդ թւում եւ Ալիեւյան կլանի անսպասելի հեռացումը կամ նույնիսկ բնական վախճանը, կարող են շնչտակի փոխել տարածաշրջանային գեոքաղաքական փխրուն հավասարակշռությունը:

Խուսափելու համար դեպքերի զարգացման այստեսակ սցենարից մեզ թւում է, որ անհետաձգելի միջոցառումներ պետք է ձեռնարկվեն խոշոր տերությունների, եւրոպական կառույցների եւ որքան զարմանալի է հենց տրանսազգային, նավթային հսկաների դեկավարությունների կողմից, որոնք ակտիվորեն գործում են տարածաշրջանում:

Նման հնարավոր զարգացումների ժամանակ չափազանց կարեւոր է մեծ տերությունների այսպես կոչված «հատուկ ուշադրությունը», անգամ ձեռնարկվող հրատապ միջոցառում-

ները, որոնք ամենայն հավանականությամբ կորակվեն որպես կոպիտ միջամտություն, սակայն դրանով կանխվում են հետագայի շատ ավելի վտանգավոր ու անլուծելի «գլխացավեր»: Իսկ որպես կանոն նման երևույթները այլևս չեն ենթարկվում հիմնավոր կարգավորման եւ հետեւանքներն էլ անդառնալի են: Ինչպես հայտնի է, նման օրինակները աշխարհում բավականին շատ են:

Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության եւ կայունության հարցում հենց հիմա, որքան էլ տարօրինակ թվա, իրենց աննախադեպ դերն ունեն տրանսազգային կորպորացիաները, մասնավորապես էներգետիկ հսկաները: Աշխարհի խոշորագույն այս ընկերությունների մեծ մասը իրենց պետական ու ազդեցիկ հովանավոր- ներով արդեն շուրջ տաս տարի է ընդգրկված են եւ ուղղորդում են տարածաշրջանի նավթա-գազային բազմամիլիարդ նախագծերը, որոնց իրականացման, կամ հումքի տեղափոխման համար խնամքով որոնվում են նոր ուղիներ: Ինչպես վերը նշեցինք, թվում է թե, այդ ոլորտում հիմնական նավթատար ու գազատար երթուղիներն արդեն նախանշված են, սակայն չեն բացառվում նաեւ այլընտրանքայինները, ինչպես պնդում էր ամերիկյան նախկին ադմինիստրացիան: Սակայն արդյունքում, հետեւողական քաղաքականության «շնորհիվ», մեկուսացվել է բնական ռեսուրսներից զուրկ եւ արեւելք - արեւմուտքից խորը շրջափակման մեջ գտնվող Հայաստանը, որը վերջին տարիներին միջազգային հանրությանը համառորեն փորձում է ներքաղաքական իրավիճակի կայունացման որոշ նշաններ ցուցադրել: Դուրս թողնելով անգամ, ինչպես նշվեց, պահեստային եւ այլընտրանքային ծրագրերից, մեկուսացվում է փաստորեն տարածաշրջանային երեք «խաղացողներից» մեկը եւ զրկվում է ընդհանրապես տարածաշրջանում հետագա որեւէ հնարավոր «դերակատարումից»: Այսինքն բացահայտորեն ստեղծվում է որոշակի մի վակուումային «որմնախորշ», որն ինչպես հայտնի է ենթակա է հետագա անկանխատեսելի վարքի:

Այսպիսով, տերիտորիայով համեմատաբար փոքր, սակայն բավականին խոցելի մեր տարածաշրջանում էներգակիրների տեղափոխման հաստատված այս ուղիներն իրենց ողջ պարագծով կարող են կատարել երկակի դեր՝ կայունաց-

ման գործոնի եւ ընդհակառակը: Օրինակ վբաց-ազերական վտխահարաբերություններում վերջին տարիներին ամեն ինչ չէ, որ հարթ է մանավանդ կրկնվող ու բնորոշ էթնիկ կոնֆլիկտների հարցում: Այս երկու հարեւանների միջեւ սահմանային գոտիներում կամ համատեղ բնակության շրջաններում պարբերաբար առաջանում են լուրջ խնդիրներ եւ ներկայացվում են փոխադարձ սուր մեղադրանքներ: Երկու երկրների քաղաքական ղեկավարությունները քաջ գիտակցում են, որ միմյանց հետ կապված են խոշոր շահույթներ ակնկալող «երկաթե խողովակներով», որոնք ստիպել են նրանց ստրատեգիական գործընկերներ կոչվել եւ որն իր հերթին տանում է դեպի ռազմական սերտ համագործակցության «աղեղի» երբորդ գոբծընկերոջ Թուրքիայի հետ: Իսկ սա էլ վերջ ի վերջո նրանց առաջնորդում է անմիջապես ԱՄՆ ու ՆԱՏՕ-ի հետ բաղձալի համագործակցության: Զսպվածության այս գործոնների շղթայից Հայաստանը հետեւողականորեն դուրս է թողնված:

Ղարաբաղյան զինադադարից /մայիս 1994 թ/ հետո, երբ արդեն հանդարտված էին վրաց-աբխազական ու վրաց-օսական հակամարտությունները եւ հաստատված էր փխրուն կայունություն, տրանսազգային ընկերությունների եւ նրանց սնուցող ֆինանսա- կան խոշոր շրջանակների կողմից տարածաշրջանային նշանակության ծրագրային նախաձեռնումներից Հայաստանի հետեւողական մեկուսացումը դիտվում է որպես հավասարակշռության խախտման վտանգավոր գործընթաց: Եւ Հայաստանի քաղաքա- կան էլիտայի ու բարձր զինվորականության շրջանակների կողմից ողջ այս համակարգը պետք է գնահատվի որպես անվտանգության ապագա լուրջ սպառնալիք:

Այս խնդրում Բաքվի քաղաքական ղեկավարության, մանավանդ հայր եւ որդի Ալիեւների աննկուն համառությունը եւ հորդորելու ունակություններն իրենց «պտուղները» տվեցին: Ուստի առավել քան զարմանալի է, որ մեկը մյուսի ետեւից Վաշինգտոնից զիջումներ ու արտոնություններ ստանալով, այսօր էլ պաշտոնական Բաքուն, իշխող կլանի գլխավորությամբ, հանդգնում է ամեն գնով համոզելու եւրոպական կառույցներին եւ Վաշինգտոնին Հայաստանին ագրեսոր պիտակելու:

Խաղաղ դիմակայում

Վերը նշված գործոններից յուրաքանչյուրն այսօր արդեն յուրովի է ներգործում ու արձագանքվում Հայաստանում եւ իրենց զարգացման անբարենպաստ ձեւերով անմիջապես պարտադրում է Հայաստանի քաղաքական ղեկավարությանը անդրադառնալու սեփական անվտանգության հետագա ամրապնդման խնդիրներին:

Խորհրդային ռեժիմի օրոք թուրքական եւ ազերական գործոնն ու իրական վտանգները /մինչեւ հիարկե 1988 թ./ Սովետական Հայաստանի բնակչության համար դարձել էին ընդամենը հիշողություն, որին մերթ ընդ մերթ անդրադառնում էին միայն համարձակ հասարակական գործիչները, կամ էլ պատմաբանները: Պետության եւ ազգային անվտանգության, բանակի ու ռազմավարության, սահմանների պահպանության եւ նման այլ խնդիրներ Խորհրդային Հայաստանի ղեկավարության իրավասության շրջանակներից, ինչպես հայտնի է, շատ հեռու էին: Պատկերն 90-ականներին լիովին փոխվեց, երբ անկախությունն ու պատերազմը միաժամանակ մուտք գործեցին մեր գիտակցության մեջ: Հրամայականները լիովին այլ կարգի ու ծավալի խնդիրներ առաջ քաշեցին Հայաստանի նոր ղեկավարության առջեւ, որոնց ճիշտ ու հեռանկարային լուծումներից մեծապես կախված էր հաջորդ սերունդների անվտանգությունը: Ուստի, այս բարդույթի մեջ առավելապես գերակայում են ռազմական ուժերի դերն ու նշանակությունը, նրանց զարգացման ապագա կողմնորոշումները:

Իսկ 90-ականների կեսերը նշանավորվեցին որպես այսպես կոչված «սթափվելու» շրջան, որի ընթացքում փորձ արվեց ռեալ գնահատականներ տալու սեփական հնարավորություններին եւ պոտենցիալ հեռանկարներին: Գոյություն ունեցող ԱՊ համագործակցության շարքերը զգալի նվազեցին, սակայն նույն շրջանակներում որդեգրվեցին իրատեսական քաղաքականության հիմնադրույթներ եւ ինթեգրացիոն գործընթացների ձգտումներ: Միաժամանակ իրատեսական մոտեցումները բացահայտեցին, որ այդ շրջանակում համագործակցության ամենահեռանկարային եզրերը դա ռազմական եւ ռազմարդյունաբերական ոլորտներն են: Եւ դա էլ պատահական չէր՝ ԽՍՀՄ-ից ժառանգություն մնացած միակ քիչ թե շատ կանո-

նակարգված ու ավանդական գործող համակարգը դա ռազմականն էր: Այն չէր պահանջում խոշոր ծախսեր, պահեստամասեր, նոր հմտություններ, կամ նոր կադրերի պատրաստում: Եւ ժամանակն էլ չէր սպասում, այն պարտադրում էր իր հրամայականները: Ուստի այլընտրանք չկար: Կար ընդամենը հրադադար եւ դրա հետ միասին պատերազմի վերսկսման սպառնալիք, որն էլ պահանջում էր պարզ պրագմատիկ հաշվարկ: Ամրապնդել կոլեկտիվ անվտանգության /1992 թ./ արդեն գոյություն ունեցող պայմանագիրը եւ փորձել լիդերի /ՌԴ-ի/ ու անդամ պետությունների հետ ինքնազրման նոր ուղիներ գտնել՝ ամրագրելով երկկողմանի ու բազմակողմ համաձայնագրերով:

Այս դրույթը իր ռեալ կիրառությունը գտավ հարավկովկասյան տարածաշրջանում շնորհիվ ՀՀ ռազմական ուժերի, որոնք անմիջապես գրավեցին բալանսի այն նժարը, որն ապահովում է արդի կայունությունը որպես հավասարի երաշխիք:

Հայաստանի անվտանգությանը սպառնող տարածաշրջանային հիմնական ուժերին դիմակայելու քաղաքական ու ռազմավարական ժամանակակից միջոցների կատարելագործումը մեր օրերի պարտադիր հրամայականն է: Այն խթանում է նաեւ տարածաշրջանում կայունության երկարատեւ պահպանմանը եւ դա անհերքելի հանգամանք է, որի հետ արդեն հաշվի են նստում շատերը:

Հայաստանը իրավունք չունի տեղի տալու, նա «նահանջի» տեղ չունի:

Երեւան, մարտ 2004 թ.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 1 բարելը = 159 լիտր նավթահումքի